ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 24.02.2022թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ԳԲՔԱ-LO-2022/14

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ «Երևանի կենդանաբանական այգի» ՀՈԱԿ
Բողոք բերող՝ «Ֆոտոն» ՍՊԸ
Երրորդ անձ՝ «Գոռ Խնկոյան» Ա/Ձ

Մասնակցությամբ՝
«Ֆոտոն» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Կ. Գևորգյանի,
«Երևանի կենդանաբանական այգի» ՀՈԱԿ-ի ներկայացուցիչ՝ Ա. Թորոսյանի,
«Գոռ Խնկոյան» Ա/Ձ-ի ներկայացուցիչ՝ Հ. Հովհաննիսյանի,

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ԵՔԿԱ-ԳՀԱՊՁԲ-22/02» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, կերերի մատակարարման ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ), քննության առնելով «Ֆոտոն» ՍՊԸ-ի (այսուհետ նաև՝ Ընկերություն) կողմից 25.01.2022թ.-ին ներկայացրած բողոքը (այսուհետ նաև՝ Բողոք) և կից փաստաթղթերը,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի նախապատմությունը.

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Ընկերությունը ներկայացրած բողոքով խնդրել է՝ պարտավորեցնել «ԵՔԿԱ-ԳՀԱՊՁԲ-22/02» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին պարտադրել՝

- չեղյալ համարել 10 հունվարի 2022թ.-ի ժամը 16:00 գնահատող հանձնաժողովի նիստի թիվ 4 արձանագրությունն ամբողջությամբ,
- ընդունել «Ֆուդսիթի» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշում,
- ընդունել գների նվազեցման նոր միաժամանակյա բանակցություններ հրավիրելու մասին համապատասխան որոշում:

Բողոքներ քննող անձին բողոքը մակագրվել է 2501.2022թ.-ին:

26.01.2022թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ բողոքը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2022/14 համարի ծածկագիրը:

10.02.2022թ.-ին՝ ներկայացված միջնորդության հիման վրա «Գոռ Խնկոյան» Ա/Ձ-ն ներգրավվել է գործով որպես երրորդ անձ:

09.02.2022թ.-ին, 18.02.2022թ.-ին և 24.02.2022թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 18.02.2022թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 24.02.2022թ.-ին:

2. «Ֆոտոն» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Ֆոտոն» ՍՊԸ-ն 25.01.2022թ.-ին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«Երևանի կենդանաբանական այգի» ՀՈԱԿ-ի կողմից այգում կենդանիների կերերի մատակարարման համար 20.12.2021 հրապարակել է ԵՔԿԱ-ԳՀԱՊՁԲ-22/02 ծածկագրով ընթացակարգ:

27 դեկտեմբերի 2021թ. ժամը 17.00 գնահատող հանձնաժողովի նիստի N 2 արձանագրության համաձայն ընթացակարգին մասնակցել են 12 մասնակից, այդ թվում նաև ՖՈՏՈՆ ՍՊԸ և ՖՈՒԴՍԻԹԻ ՍՊԸ:

Վերը նշված հայտերի բացման նիստի արձանագրությամբ նշվել են բոլոր մասնակիցների գնային առաջարկներով ներկայացված գները բացի ՖՈԻԴՍԻԹԻ ՍՊԸ /արձանագրությունը հրապարակվել է www.gnumner.am կայքում 2022-01-05 18:19:03-ից անժամկետ/:

Քանի որ ընթացակարգը հայտարարվել էր «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, հետևաբար պատվիրատուն բոլոր մասնակիցներին, նաև ՖՈԻԴՍԻԹԻ ՍՊԸ կանչում է գների նվազեցման միաժամանակյա բանակցությունների, հաշվի չառնելով այն, որ վերը նշված ընկերությունը ըստ արձանագրության, չի ներկայացրել որևէ գնային առաջարկ /քանի որ ընթացակարգը իրականցվել է թղթային տարբերակով այլ ապացույցներ հնարավոր չէ ձեռք բերել/:

04 հունվարի 2022թ. Ժամը 17.00 գնահատող հանձնաժողովի նիստի N 3 արձանագրության համաձայն նույնությամբ արձանագրվել է N 4 արձանագրությամբ արձանագրվածը, կրկին ՖՈԻԴՍԻԹԻ ՍՊԸ անվան դիմաց որևէ գին չի նշվել:

10 հունվարի 2022թ. Ժամը 16.00 գնահատող հանձնաժողովի նիստի N 4 արձանագրության համաձայն հանձնաժողովը գների նվազեցման շուրջ թույլատրել է բանակցել նաև ՖՈԻԴՍԻԹԻ ՍՊԸ-ին: Բանակցությունների ընթացքում հանձնաժողովի կողմից թույլ է տրվել մի շարք խախտումներ: Օրինակ 15 լոտով /գազար/ հանձնաժողովը հայտնել է, որ ոչ թե պետք է կատարել գների նվազեցում բանակցությունների միջոցով, այլ պետք է ներկայացվեն գներ իրենց նախահաշվային գներից նվազ: Այդ ժամանակ հանձնաժողովը հայտնել է, որ 15 լոտով /գազար/ ապրանքի գինը կազմում է 50 դրամ, և եթե այդ գնից ցածր որևէ մասնակից գին չի առաջակի ապա պետք չէ բանակցել: Բնականաբար այս դեպքում ՖՈՏՈՆ ՍՊԸ գների նվազեցում չի կատարում, որովհետև դա անտրամաբանական է: Հետո երբ որ հրապարակվում է N 4 արձանագրությունը, պարզվում է որ ՖՈԻԴՍԻԹԻ ՍՊԸ ներկայացրել է ավելի ցածր գին քան ՖՈՏՈՆ ՍՊԸ: Պետք չէ մոռանալ նաև այն մասին, որ այդ ընկերության անվան դիմաց N 2 և N 3 արձանագրություններով գներ չի եղել հրապարակված: Այստեղ հարց է առաջանում, արդյոք այդ մասնակիցը ընդհանրապես ներկայացրել է գնային առաջարկ թե ոչ, թե հայտերի բացումից հետո է պատվիրատուն այն ընդունել, եթե ոչ ապա ինչու չի հրապարակվել վերջինիս գները: Ի դեպ բանակցությունների ընթացքում ՖՈԻԴՍԻԹԻ ՍՊԸ նույնպես որևէ գների բանակցությունների չի մասնակցել:

Ցանկանում ենք նաև հայտնել, որ վերոնշյալների մասին ՖՈՏՈՆ ՍՊԸ տեղեկացել է միայն այն ժամանակ, երբ որ www.gnumner.ann կայքում 12.01.2022թ հրապարակվել է

պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը, քանի որ այն հրապարակվել է N 4 արձանագրության հետ 1 րոպե տարբերությամբ:

Որպես նշվածի ապացույց, անհրաժեշտ է գնահատող հանձնաժողովից պահանջել անցկացված բանակցությունների տեսաձայնագրությունը կամ ձայնագրությունը, ինչը կվկայի մեր ասածի հավաստիության մասին, իսկ դրա չլինելը կամ չներկայացնելը անհրաժեշտ է մեկնաբանել ի օգուտ ՖՈՏՈՆ ՍՊԸ-ի, քանի որ ՀՀ կառավարության 04.05.2017 թ. N 526-Ն որոշման 26 կետի 5 ենթակետի համաձայն գնահատող հանձնաժողովի նիստերը տեսաձայնագրվում կամ ձայնագրվում և արձանագրվում են, և յուրաքանչյուր նիստի արդյունքում նիստին ներկա հանձնաժողովի անդամները և քարտուղարը պարտադիր կարգով ստորագրում են այդ նիստի արձանագրությունը: Արձանագրությունը գնման ընթացակարգի արձանագրության անբաժանելի մասն է:

Գտնում ենք, որ գնահատող հանձնաժողովի կողմից խախտվել են գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված մի շարք պահանջներ. Մասնավորապես

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 2-րդ մասը, այն է հայտերի բացման նիստում հրապարակվում ենց

1) հայտ ներկայացրած յուրաքանչյուր մասնակցի անվանումը (անունը).

2) տեղեկություններ՝ հայտեր պարունակող ծրարների կազմման ն ներկայացման՝ հրավերի պահանջներին համապատասխանության վերաբերյալ.

3) տեղեկություններ՝ բացված յուրաքանչյուր ծրարում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության վերաբերյալ.

4) տեղեկություններ՝ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերով սահմանված վավերապայմաններին համապատասխանելու մասին.

5) յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը՝ տառերով և թվերով արտահայտված.

6) տեղեկություններ՝ հայտերի հետկանչման կամ փոփոխությունների մասին:

ՀՀ կառավարության 04.05.2017 թ. N 526-Ն որոշման 40 կետի 5 ենթակետը, այն է ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին որոշելու նպատակով հանձնաժողովի նիստում առաջարկված գների նվազեցման նպատակով ոչ գնային պայմանները բավարարող գնահատված բոլոր մասնակիցների հետ վարվում են միաժամանակյա բանակցություններ:

Ինչպես նաև խախտվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածով, 7-րդ հոդվածով սահմանված օրենքի սկզբունքները նպատակները:»:

Ելնելով վերոգրյալներից՝ Ընկերությունը Բողոքներ քննող անձին խնդրել է պարտավորեցնել «ԵՔԿԱ-ԳՀԱՊՁԲ-22/02» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին պարտադրել՝

- չեղյալ համարել 10 հունվարի 2022թ.-ի ժամը 16:00 գնահատող հանձնաժողովի նիստի թիվ 4 արձանագրությունն ամբողջությամբ,
- ընդունել «Ֆուդսիթի» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշում,
- ընդունել գների նվազեցման նոր միաժամանակյա բանակցություններ հրավիրելու մասին համապատասխան որոշում:

3. <u>«Երևանի կենդանաբանական այգի» ՀՈԱԿ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը</u>.

Բողոքներ քննող անձը 26.01.2022թ.-ին թիվ /ԲՔԱ-Լ0/2/1467-2022 գրությամբ դիմել է «Երևանի կենդանաբանական այգի» ՀՈԱԿ-ին (այսուհետ նաև՝ Պատվիրատու), հնարավորություն տալով «Ֆոտոն» ՍՊԸ-ի կողմից 25.01.2022թ.-ին ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել անհրաժեշտ բոլոր փաստաթղթերի պատճեններն ու Պատվիրատուի գրավոր կարծիքը:

Պատվիրատուն ստանալով գրավոր դիրքորոշում հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել է հրավիրված նիստերին:

Պատվիրատուն 31.01.2022թ.-ին ներկայացված թիվ 7 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Ներկայացնում ենք «Ֆոտոն» ՍՊԸ-ի կողմից 25.01.2022թ. ներկայացված բողոքի հետ կապված պարզաբանում և անհրաժեշտ փաստաթղթերը:

Հայտնում ենք ձեզ, որ «ԵՐԵՎԱՆԻ ԿԵՆԴԱՆԱԲԱՆԱԿԱՆ ԱՅԳԻ» ՀՈԱԿ-ի կարիքների համար ԵՔԿԱ-ԳՀԱՊՁԲ-22/02 ծածկագրով հայտարարված գնման ընթացակարգի հայտերի բացումը տեղի է ունեցել 27.12.2021թ. ժամը 17.00-ին ք. Երևան Մյասնիկյան 20 հասցեում, ինչպես նախատեսված է եղել ընթացակարգի հրավերով:

Ընթացակարգին հայտ են ներկայացրել տասներկու մասնակից: Բացման նիստին օրենքով սահմանված կարգով կազմվել է բացման նիստի արձանագրություն, որը ուղարկվել է հրապարակման, քանի որ ընթացակարգը կազմակերպվել է 66 չափաբաժնով, բավական բարդ էր հայտերի գնահատումը ու արձանագրության կազմումը: Հայտնում ենք

ձեզ, որ արձանագրությունում թույլ է տրվել տեխնիկական վրիպակ և մասնակիցներից 1-ի՝ «Ֆուդսիթի» ՍՊԸ-ի գները չեն զետեղվել: Արձանգրության հրապարակումից հետո «Ֆուդսիթի» ՍՊԸ-ից զանգել են ընթացակարգի քարտուղարին, խնդրել տեխնիկական վրիպակը ուղղել: Քարտուղարը գների նվազեցման շուրջ բանակցությանը բնականաբար ծանուցել է նաև «Ֆուդսիթի» ՍՊԸ-ին, հաջորդ արձանագրության մեջ գրել նաև նրա առաջարկած գները, որպես վրիպակի շտկում: /Արձանագրությունները կցվում են/:

Գազար ապրանքատեսակի շուրջ ներկայացված բողոքը անհասկանալի է:

Ներկայացնում ենք «Ֆուդսիթի» ՍՊԸ-ի և «Ֆոտոն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերի բնօրինակից սկանավորված տարբերակը, ինչպես նաև հայտնում ենք, որ բոլոր մասնակիցները անխտիր, այդ թվում նաև «Ֆոտոն» ՍՊԸ-ի ներկայացուցիչը բացման նիստի ժամանակ լուսանկարել են բոլոր մասնակիցների հայտերը և ցանկացած այլ մասնակից ևս կարող է փաստել, որ «Ֆուդսիթի» ՍՊԸ-ն ներկայացրել է պատշաճ հայտ: Ինչպես նաև ներկայացված հայտերում երևում է, թե որ կազմակերպությունը ինչ գին է տվել գազարի համար, իսկ այն փաստը, որ «Ֆոտոն» ՍՊԸ-ը չի վերանայել իր տված գինը բանակցության ընթացքում երևում է նաև ձայնագրությունում:

Կից ներկայացնում ենք նաև բանակցությունների վարման նիստի ձայնագրությունը, ինչը հուսանք լույս կսփռի իրողության վրա:»:

4. <u>Երրորդ անձ՝ «Գոռ Խնկոյան» Ա/Ձ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը</u>.

Ներկայացված բողոքի քննության ընթացքում, «ԵՔԿԱ-ԳՀԱՊՁԲ-22/02» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում «Գոռ Խնկոյան» Ա/Ձ-ն, 10.02.2022թ.-ին ներկայացված միջնորդությամբ ներգրավվել է գործով որպես երրորդ անձ (այսուհետ նաև՝ Երրորդ անձ):

Երրորդ անձը, լինելով պատշաճ ծանուցված կայանալիք նիստի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել է հրավիրված նիստերին՝ բանավոր անդրադարձ կատարելով բողոքով ներկայացված հիմքերին ու հիմնավորումներին:

«Գոռ Խնկոյան» Ա/Ձ-ն 10.02.2022թ.-ին ներկայացրած գրավոր դիրքորոշմամբ հայտնել է նաև հետևյալը.

«Սույն թվականի հունվարի 25-ին «Ֆոտոն» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է բողոք «Երևանի կենդանաբանական այգի» ՀՈԱԿ-ի կողմից հայտարարված «ԵՔԿԱ-ԳՀԱՊՁԲ-22/02» ծածկագրով ընթացակարգի դեմ, որը ստացել է «ԳԲՔԱ-Լ0-2022/14» ծածկագիրը:

Ա/Ձ Գոռ Խնկոյանը ևս մասնակցել է տվյալ ընթացակարգին և միանում է «Ֆոտոն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքին, քանի որ ընթացակարգի գնահատող հանձնաժողովը և առավելևս գնումների համակարգողը գործել են ոչ իրավաչափ, ինչի վերաբերյալ ավելի մանրամասն տեղեկատվություն կարող ենք ներկայացնել, եթե Ձեր կողմից ևս մեկ բողոքի քննության նիստ նշանակվի:»:

5. <u>ԳԲՔԱ-LO-2022/14 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. «Երևանի կենդանաբանական այգի» ՀՈԱԿ-ի կողմից 20.12.2021թ.-ին հայտարարվել է «ԵՔԿԱ-ԳՀԱՊՁԲ-22/02» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

ii. Ընթացակարգի հրավերով գնման առարկա է հանդիսանում Կերերի մատակարարման ձեռքբերումը, որը խմբավորված է «66» չափաբաժիններում:

iii. Ընթացակարգի հրավերով սահմանվել է, որ գնման գործընթացն իրականացվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդված 6-րդ կետի համաձայն:

iv. Ընթացակարգին մասնակցելու նպատակով, ի թիվս այլ ընկերությունների, հայտ են ներկայացրել նաև «Ֆոտոն» ՍՊԸ-ն և «Ֆուդսիթի» ՍՊԸ-ն:

v. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 27.12.2021թ.-ի նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը հրապարակել է հայտ ներկայացրած մասնակիցների գնային առաջարկները և որոշել կասեցնել նիստը մասնակիցների ներկայացրած հայտերը գնահատելու համար:

vi. Նույն արձանագրության համաձայն՝ «Ֆուդսիթի» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկները բացակայում են (սյունյակը դատարկ է):

vii. www.gnumner.am կայքում 05.01.2022թ.-ին հրապարակված Հանձնաժողովի 04.01.2022թ.-ի նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը որոշել է բավարար գնահատել մասնակիցների հայտերը (այդ թվում՝ «Ֆոտոն» ՍՊԸ-ի և «Ֆուդսիթի» ՍՊԸ-ի) և Ընթացակարգի բոլոր չափաբաժինների մասով մասնակիցներին հրավիրել միաժամանակյա բանակցությունների:

viii. Նույն արձանագրության համաձայն՝ «Ֆուդսիթի» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկները բացակայում են (սյունյակը դատարկ է):

ix. Բողոքներ քննող անձին տրամադրված, սակայն www.gnumner.am կայքում չհրապարակված Հանձնաժողովի նույն 04.01.2022թ.-ի նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ «Ֆուդսիթի» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկները առկա են (սյունյակը լրացված է):

x. Հանձնաժողովի 10.01.2022թ.-ի նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը որոշել է Ընթացակարգի 1, 2, 3, 11, 12, 14-23, 5-29, 32, 34, 36-39, 41, 42, 48, 52, 53, 63 և 66-րդ չափաբաժինների մասով հաղթող մասնակից ճանաչել «Ֆուդսիթի» ՍՊԸ-ին, իսկ «Ֆոտոն» ՍՊԸ-ին՝ 8, 9, 10, 15, 13, 33, 40, 43-47, 49, 50, 51 և 64-րդ չափաբաժինների մասով:

xi. www.gnumner.am կայքում 12.01.2022թ.-ին Պատվիրատուի կողմից հրապարակվել է պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարություն և սահմանվել է անգործության ժամկետ:

6. Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցության, որ «Ֆոտոն» ՍՊԸ-ի կողմից 25.01.2022թ.-ին ներկայացված բողոքը հիմնավոր է և ենթակա բավարարման մասնակիորեն, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սույն օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Վերոնշյալ հոդվածների վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը, փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Ինչպես նաև Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Զարգացնելով վերոգրյալները՝ Բողոքներ քննող անձը փաստում է նաև, որ գնման առարկան համարժեք հատուցմամբ ձեռք բերելու նպատակը կլիներ ձևական, եթե դրան հասնելուն ուղղված ընթացակարգերի կազմակերպումը չլիներ տնտեսող, արդյունավետ և օգտավետ:

Այն է՝ ընթացակարգերի կազմակերպումը պետք է լինի՝

1. տնտեսող, այսինքն՝ նախատեսված արդյունքին կամ նպատակին հասնելու համար նախատեսված ռեսուրսների, ֆինանսական միջոցների մինիմալացմամբ՝ պահպանելով նախապես սահմանված որակը:

2. արդյունավետ, այսինքն՝ արդյունքի կամ նպատակի մասով պլանավորված և փաստացի վիճակների համեմատությունը: Նախատեսված արդյունքին կամ նպատակին հասնելու համար օգտագործված նյութական և ոչ նյութական միջոցների համարժեքությունը ձեռք բերված արդյունքին, երբ ապահովվում է կատարված ծախսի և Պատվիրատուի համար դրա օգտակարության միջև պատշաճ հարաբերակցությունը:

3. Օգտավետ՝ գնման առարկան համարժեք հատուցմամբ ձեռք բերելու նպատակով դրան հասնելուն ուղղված ընթացակարգերի արդյունքի կամ նպատակի առավելագույն մակարդակի ապահովում:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել նաև, որ իրավունքի սկզբունքները հիմնարար գաղափարներ են, որոնք արտահայտում են հասարակական կյանքի օբյեկտիվ օրինաչափությունները, ուղղակի կամ անուղղակի ամրագրվում են իրավական նորմերում, իրավական համակարգի հենասյունն են, կոչված են կարգավորելու հասարակական հարաբերությունները, ունեն համապարտադիրության հատկանիշ:

Օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած՝

1) հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը.

2) գնային առաջարկը.

3) ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ կամ տեխնիկական բնութագիր), եթե հրավերով նախատեսված է.

4) հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ մինչև ֆինանսական միջոցներ նախատեսվելը սույն օրենքով սահմանված կարգով կարող է կնքվել պայմանագիր՝ պայմանով, որ դրա շրջանակներում գնում կարող է կատարվել անհրաժեշտ ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում: Սույն մասի համաձայն կնքված պայմանագիրը լուծվում

է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվել: Սույն մասը կարող է կիրառվել, եթե՝

1) պատվիրատուն չի կարողանում նախապես կանխատեսել (հաշվարկել) գնումների համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների չափը.

2) ապրանքի մատակարարումը, աշխատանքի կատարումը կամ ծառայության մատուցումը պետք է սկսվի տվյալ գնման համար ֆինանսական միջոցներ նախատեսվելու պահից հաշված այնպիսի ժամկետում, որի ընթացքում գնման մրցակցային որևէ ձևի կիրառումը ժամկետի առումով անհնար է:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 18-րդ կետի համաձայն՝ Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն գնում կատարվելու դեպքում գնումների պլանում գնման առարկան ներառվում է առանց գնման ընդհանուր գումարի նշման՝ ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո գնման պլանում համապատասխան լրացում կատարելու պայմանով: Ընդ որում, համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն սահմանված կարգով փոփոխություն է կատարում գնումների պլանում, իսկ պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարման, աշխատանքների կատարման կամ ծառայությունների մատուցման նպատակով համաձայնագիր կնքելու ծանուցումը և կնքվելիք համաձայնագրի նախագիծը պայմանագիրը կնքած անձին է ուղարկում գնումների պլանում փոփոխությունը կատարվելու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում:

Վերոնշյալ դրույթների վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը հանգում է այն հետևության, որ Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ մինչև ֆինանսական միջոցներ նախատեսվելը, գնման գործընթաց սկսելու համար գնման առարկան պետք է ներառվի գնումների պլանում՝ առանց գնման ընդհանուր գումարի նշման՝ բացառելով նաև միավոր գումարի նշումը: Այս կարգով է միայն հնարավոր փաստել և հաստատված համարել գնման գործընթացի կազմակերպման իրավական հիմքի՝ գնումների պլանի առկա լինելու հանգամանքը:

Օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովի, պատվիրատուի և մասնակիցների միջև բանակցություններն արգելվում են, բացառությամբ՝ երբ մրցույթին մասնակցել է մեկ մասնակից, որի ներկայացրած հայտը համապատասխանում է հրավերի պահանջներին կամ հայտերի գնահատման արդյունքում

հրավերի պահանջներին համապատասխան է գնահատվել միայն մեկ մասնակցի հայտ կամ առաջարկված նվազագույն գների հավասարության դեպքում, կամ եթե ոչ գնային պայմանները բավարարող գնահատված հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են այդ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցները: Սույն կետի համաձայն վարվող բանակցությունները կարող են հանգեցնել միայն առաջարկված գնի նվազեցմանը կամ վճարման պայմանների փոփոխությանը, իսկ բանակցությունները վարվում են միաժամանակյա՝ բոլոր մասնակիցների հետ:

Կարգի 40-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստում նախագահը (նիստը նախագահողը) նիստը հայտարարում է բացված և հրապարակում է գնման հայտով սահմանված՝ տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների գինը՝ մեկ թվով արտահայտված:

Նույն կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հանձնաժողովի նախագահը հայտարարում է հայտեր ներկայացրած մասնակիցների գնային առաջարկները՝ մեկ թվով արտահայտված, հիմք ընդունելով տառերով գրվածը:

Նույն կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ հանձնաժողովը հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշում և հայտարարում է ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին: Ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին: Առաջարկված նվազագույն գների հավասարության դեպքում, կամ եթե ոչ գնային պայմանները բավարարող գնահատված հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների գնման հայտով սահմանված գինը կամ գնումն իրականացվում է օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա՝

ա. ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին որոշելու նպատակով հանձնաժողովի նիստում առաջարկված գների նվազեցման նպատակով ոչ գնային պայմանները բավարարող գնահատված բոլոր մասնակիցների հետ վարվում են միաժամանակյա բանակցություններ, եթե նիստին ներկա են բոլոր մասնակիցները (համապատասխան լիազորություն ունեցող ներկայացուցիչները),

բ. հակառակ դեպքում հանձնաժողովի նիստը կասեցվում է, և մեկ աշխատանքային օրվա ընթացքում գնահատող հանձնաժողովի քարտուղարը բավարար գնահատված բոլոր մասնակիցներին էլեկտրոնային ձևով միաժամանակ ծանուցում է գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման օրվա, ժամի և վայրի մասին,

գ. բանակցությունները վարվում են ոչ շուտ, քան ծանուցումն ուղարկվելու օրվան հաջորդող օրվանից երկրորդ և ոչ ուշ, քան հինգերորդ աշխատանքային օրը:

Վկայակոչված նորմերի վերլուծությունից հետևում է, որ հայտերի բացման նիստում հրապարակվում է գնման հայտով սահմանված՝ տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների գինը: Եթե հայտերի գնահատման ընթացքում արձանագրվում է առաջարկված նվազագույն գների հավասարության, կամ եթե մասնակցել է մեկ մասնակից, կամ եթե հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների, աշխատանքների և ծառայությունների գնման հայտով սահմանված գինը, կամ գնումն իրականացվում է օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա ոչ գնային պայմանները բավարարող գնահատված բոլոր մասնակիցների հետ պետք է վարվեն միաժամանակյա բանակցություններ, եթե նիստին ներկա են բոլոր մասնակիցները:

Մասնակիցների՝ բացման նիստին ներկա չգտնվելու դեպքում հանձնաժողովի նիստը կասեցվում է, և մեկ աշխատանքային օրվա ընթացքում գնահատող հանձնաժողովի քարտուղարը բավարար գնահատված բոլոր մասնակիցներին էլեկտրոնային ձևով միաժամանակ ծանուցում է գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման օրվա, ժամի և վայրի մասին, որը վարվում է ոչ շուտ, քան ծանուցումն ուղարկվելու օրվան հաջորդող օրվանից երկրորդ և ոչ ուշ, քան տասներորդ աշխատանքային օրը:

Սույն գործում առկա փաստերի համաձայն՝ «Երևանի կենդանաբանական այգի» ՀՈԱԿ-ի կողմից 20.12.2021թ.-ին հայտարարված «ԵՔԿԱ-ԳՀԱՊՁԲ-22/02» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ հրավերով գնման առարկա է հանդիսանում կերերի մատակարարման ձեռքբերումը, որը խմբավորված է «6» չափաբաժիններում: Ընթացակարգի հրավերով սահմանվել է, որ գնման գործընթացն իրականացվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդված 6-րդ կետի համաձայն: Հանձնաժողովի 27.12.2021թ.-ի նիստի թիվ 2 արձանագրությամբ և www.gnumner.am կայքում 05.01.2022թ.-ին հրապարակված Հանձնաժողովի 04.01.2022թ.-ի նիստի թիվ 3

արձանագրությամբ «Ֆուդսիթի» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկները բացակայում են (սյունյակը դատարկ է):

Բողոքներ քննող անձին տրամադրված, սակայն www.gnumner.am կայքում չհրապարակված Հանձնաժողովի նույն 04.01.2022թ.-ի նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ «Ֆուդսիթի» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկները առկա են (սյունյակը լրացված է):

Հանձնաժողովի 10.01.2022թ.-ի նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը որոշել է Ընթացակարգի 1, 2, 3, 11, 12, 14-23, 5-29, 32, 34, 36-39, 41, 42, 48, 52, 53, 63 և 66-րդ չափաբաժինների մասով հաղթող մասնակից ճանաչել «Ֆուդսիթի» ՍՊԸ-ին, իսկ «Ֆոտոն» ՍՊԸ-ին՝ 8, 9, 10, 15, 13, 33, 40, 43-47, 49, 50, 51 և 64-րդ չափաբաժինների մասով:

Վերոհիշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման վրա, դրանց համակարգված վերլուծության արդյունքում, սույն գործում առկա փաստերը համադրելով նորմերին՝ Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ «Երևանի կենդանաբանական այգի»ՀՈԱԿ-ը, «ԵՔԿԱ-ԳՀԱՊՁԲ-22/02» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակում հայտերի բացման նիստում՝ 27.12.2021թ.-ի նիստի թիվ 2 արձանագրությամբ, չի հրապարակել (արձանագրել) մասնակցության հայտ ներկայացրած «Ֆուդսիթի» ՍՊԸ-ի գնային առաջարկները, թույլ տալով Կարգի 40-րդ կետի 3-րդ ենթակետի դրույթների խախտում: Ավելին, «Ֆուդսիթի» ՍՊԸ-ի գնային առաջարկը չի հրապարակվել (արձանագրվել) նաև www.gnumner.am կայքում 05.01.2022թ.-ին հրապարակված Հանձնաժողովի 04.01.2022թ.-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ, այլ հրապարակվել (արձանագրվել) է միայն Բողոքներ քննող անձին տրամադրված, սակայն www.gnumner.am կայքում չհրապարակված Հանձնաժողովի նույն 04.01.2022թ.-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ, ըստ էության զրկելով մնացած մասնակիցներին Օրենքով պահպանվող մրցակցության և հավասարության սկզբունքներից բխող մասնակցության հավասար պայմաններ ունենալու իրենց իրավունքից:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ Պատվիրատուի լիազորված անձի կողմից 11.01.2022թ.-ին Բողոքներ քննող անձին ներկայացված մասնակիցներին ուղարկված վրիպակի մասին ծանուցման արտատպումից հնարավոր չէ պարզել, որ մասնակիցները բանակցությունների ժամանակ իրազեկված են եղել «Ֆուդսիթի» ՍՊԸ-ի գնային առաջարկի մասին, այն որ տեղի է ունեցել վրիպակ և այն Հանձնաժողովի կողմից

վերացվել է 04.01.2022թ.-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ, քանի որ դրանում առկա չէ ամսաթիվ:

Ավելին, հարկ է նկատել, որ վրիպակը տեղի է ունեցել ոչ միայն թիվ 3 արձանագրությամբ, այլ նաև թիվ 2 արձանագրությամբ՝ հայտերի բացման նիստի ժամանակ, ուստի ենթակա էր ուղղման ոչ միայն թիվ 3 արձանագրությունը (հայտերի գնահատման) այլ նաև՝ թիվ 2 արձանագրությունն էլ նույնպես:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Երևանի կենդանաբանական այգի» ՀՈԱԿ-ի կողմից 20.12.2021թ.-ին հայտարարված «ԵՔԿԱ-ԳՀԱՊՁԲ-22/02» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի արդյունքում կայացված միաժամանակյա բանակցությունների արդյունքում ընդունված բոլոր որոշումներն իրավաչափ չեն, քանի որ Հանձնաժողովի կողմից թույլ է տրվել Կարգի 40-րդ կետի 3-րդ ենթակետի դրույթներով նախատեսված պահանջների խախտում, որպիսի պայմաններում «Ֆոտոն» ՍՊԸ-ի ներկայացրած բողոքն այս մասով հիմնավոր է և ենթակա բավարարման:

Անդրադառնալով բողոքով ներկայացված «Ֆուդսիթի» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին պահանջին՝ Բողոքներ քննող անձը այն գտնում է անհիմն, քանի որ ինչպես վերը նշվեց Կարգի 40-րդ կետի 3-րդ ենթակետի հիմքով Հանձնաժողովի նախագահն է նիստով հրապարակում մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները, որոնք Կարգի 26-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն արձանագրվում են՝ արձանագրություն կազմելու միջոցով, որպիսի պայմաններում Բողոքներ քննող անձը գտնում է, որ «Ֆուդսիթի» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտն անբավարար չի կարող գնահատվել և մերժվել՝ վերջինիս կողմից մեղավորության բացակայության պատճառաբանությամբ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը,

Ո Ր Ո Շ Ե Ց

«Ֆոտոն» ՍՊԸ-ի կողմից 25.01.2022թ.-ին ներկայացված ԳԲՔԱ-ԼՕ-2022/14 ծածկագրով բողոքը բավարարել մասնակիորեն:

1. Պարտավորեցնել «ԵՔԿԱ-ԳՀԱՊՁԲ-22/02» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին՝

- դադարեցնել թիվ 4 արձանագրությունն ամբողջությամբ:

- ընդունել միաժամանակյա բանակցություններ հրավիրելու մասին համապատասխան որոշում:

2. Մնացած մասով բողոքը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**